



DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA. 630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016-4885 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

Թիւ 28916
Մարտ 1, 1985

Արժանաշնորհ
Տ. Զենոք Քինյ. Նալպանտեան
Հովհանն Ս. Յարութիւն Եկեղեցւոյ
Նախազան ծխական Խորհուրդի
Սառւթ Միլուոքի.

Սիրելի Տէր Զենոք,

Ստացած ենք Ձունուար 31, 1985, թուակիր ծեր տեղեկագիրը, որով կը հա-
ղորդէք թէ ծեր Նախազանութեամբ Դեկտեմբեր 2ին գումարուած համայնքիդ ծխական
Ժողովին մէջ կատարուած է ծխական Խորհուրդի հինգ անդամոց ընտրութիւնը, եւ
Ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը՝ կը խնդրէք ընտրուած անձերու վա-
ւերացման պաշտօնագիրը:

Այսու գիրով կը վաւերացնենք ծխական Խորհուրդի նորընտիր անդամները,
ըստ ստորեւ տրուած ցանկին:

Համեցէք փութով Առաջնորդարան ղրկել ծխական Խորհուրդի նորընտիր ղի-
ւանի անդամոց անունները, հասցէները եւ հեռածայնի թիւերը:

Օրհնելով ծխական Խորհուրդի նոր կազմը, ծեզի եւ ծեր պաշտօնակիցնե-
րուն կը մաղթենք յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի պայծա-
ռուէիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ
Ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՁԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Արմէն Հածինեան
Մայըր Ծանտէկեան
Ռասըլ Քայիշեան
Սամ Հածինեան
Մամբրէ Օհանեան